ArmLur.am

I SSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

20 դեկտեմբերի երեքշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

183
(2663)

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 158



Նիկոլ Փաշինյանը 2016 թվականին խոստացել էր ՀՀ վարչապետ դառնալուն պես ոչ միայն նվազեցնել ՀՀ արտաքին պարտքը, այլ նաեւ այն աուդիտի ենթարկել: 2016 թվականի սեպտեմբերի 10-ին Նիկոլ Փաշինյանն ասել էր. «Մեզ համար հաջորդ կարեւորագույն խնդիրը Հայաստանի արտաքին պետական պարտքն է, որը, ինչպես հայտնի է, հատել է 5 միլիարդ դոլարի սահմանագիծը, եւ 2020 թվականին արտաքին պետական պարտքի սպասարկման համար Հայաստանը պետք է ծախսի 1 միլիարդ դոլար: Այսինքն՝ 1 միլիարդ դոլար պետք է ետ վճարի՝ նախկինում վերցրած պարտքերի մարման ժամանակացույցի համաձայն: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, ըստ այդմ, համարում է, որ Հայաստանի արտաքին պետական պարտքը պետք է աուդիտի ենթարկվի, եւ Հայաստանի ժողովուրդը պետք է ունենա ապացույցներ եւ փաստեր այն մասին, թե որքանով է այդ պարտքն արդյունավետ օգտագործվել», - ասել էր նա: 2021 թվականին, սակայն, Նիկոլ Փաշինյանը ՀՀ Ազգային ժողովում իր թիմակից պատգամավորի հարցին պատասխանելիս արդեն հերքեց ավելի քան երկու տարի առաջ հնչեցրած իր իսկ խոսքը՝ հայտարարելով. «Պարտքից եկեք չվախենանք. երկրներ կան՝ իրենց ՀՆԱ-ի 200 % պետական պարտք ունեն»: Եվ, ըստ այդմ, Նիկոլ Փաշինյանի վարչապետության 4 տարիների ընթացքում Հայաստանի արտաքին պարտքը, նվազելու փոխարեն, աճել է: Ըստ Ֆինանսների նախարարության վերջին տվյալների՝ 2022 թվականին Հայաստանի պետական պարտքը կազմում է 9 մլրդ 933 մլն դոլար:



Ազգային ժողովի փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանը, որ նաեւ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության փոխնախագահ էր, կուսակցական պաշտոնին հրաժեշտ է տվել: ՔՊ վարչության մյուս փոխնախագահը, հիշեցնենք, Հակոբ Սիմիդյանն էր: Վերջինս հիմա նույնիսկ կուսակցության վարչության կազմում ներկայացված չէ: Կուսակցության վարչության փոխնախագահներն այժմ ԱԺ համանուն խմբակցության պատգամավորներ Գեւորգ Պապոյանն ու Վահագն Ալեքսանյանն են: «Ժողովուրդ» օրաթերթն ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանից հետաքրքրվեց, թե ինչով է պայմանավորված իր՝ փոխնախագահի պաշտոնին հրաժեշտ տալը: «ՔՊ նախորդ վարչությունը (որի փոխնախագահն էի) դադարել է գործել կուսակցության հերթական համագումարից հետո, ինչի ժամանակ ընտրվել է նոր վարչություն, որ վարչության նոր նախագահ եւ փոխնախագահներ է ընտրել»,- կարճ՝ առանց մեկնաբանության պատասխանեց Ռուբեն Ռուբինյանը:



ՀՀ արտաքին գործերի ներկայիս նախարար Արարատ Միրզոյանին ծեծի ենթարկելու գործը հսկող դատախազ Արամ Արամյանը նոր պաշտոն է ստացել: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ նրան ՀՀ գլխավոր դատախազության՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալի պաշտոնից ազատել են եւ նշանակել Կենտրոնի դատախազ: Վերջինիս տեղափոխությունը քրեական գործով անցնողներին առավել վատ վիճակում է դրել, քանի որ քրեական գործով մեղադրյալի կարգավիճակում հայտնված մարդիկ չգիտեն, թե այս տեղափոխությունից հետո ինչ է լինելու իրենց քրեական վարույթի հետ: Խոսքը 2020 թվականի նոյեմբերի 9-ի առավոտյան ՀՀ ազգային ժողովի դիմաց մեծ թվով անձանց կողմից խորհրդարանի ղեկավար Արարատ Միրզոյանին ծեծի ենթարկելու դեպքի մասին է: Հիշեցնենք, որ ԱԺ նախկին նախագահը տեղափոխվել էր հիվանդանոց եւ վիրահատության ենթարկվել: Ու թեեւ այս դեպքից անցել է ուղիղ երկու տարի, սակայն գործով նախկինում կալանավորված անձինք այժմ գտնվում են անազատության մեջ: Երկու տարվա ընթացքում նախաքննական մարմինը այդպես էլ չի կարողացել պարզել եւ բացահայտել, թե ովքեր են այդ օրը ծեծի ենթարկել Միրզոյանին: Գործը մինչեւ օրս դատարան այդպես էլ չի ուղարկվել: Ավելին՝ նրան ծեծի ենթարկելու գործը հսկող դատախազն էլ նոր պաշտոն է ստացել. արդյոք սա՞ է աշխատանքի արդյունավետության մասին պատկերացումը ՀՀ դատախազությունում...



Թալինի քաղաքապետը պետական միջոցների հաշվին մոտ 10 մլն դրամանոց ավտոմեքենա է գնել: «Ժողովուրդ» օրաթերթի ձեռքի տակ հայտնված պաշտոնական փաստաթղթից հայտնի դարձավ, որ ավտոմեքենան գնվել է ֆիզիկական անձ Տարոն Կարապետյանից 9 մլն 700 հազար դրամով: Թալինի համայնքապետարանի աշխատակազմը գնումների փաստաթղթում «մոռացել է» նշել գնված ավտոմեքենայի մոդելը: Այս հարցին պատասխան ստանալու նպատակով «Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Թալին համայնքի ղեկավար Տավրոս Սափեյանի հետ: «Այդ ավտոմեքենան համայնքի ղեկավարի համար է, նախկին մեքենաների «մատոռները» թափված էին, հին մեքենաներ էին՝ անմխիթար վիճակում գտնվող: Շահագործել եմ իմ անձնական մեքենան, առանց ոչ մի բանի. գիտեք՝ համայնքը ինչ վիճակում էր»,- ներկայացրեց Սափեյանը՝ միաժամանակ նշելով ավտոմեքենայի մոդելը՝ Mercedes: «Ժողովուրդ» օրաթերթը երիտասարդ քաղաքապետից հետաքրքրվեց, թե ինչու է որոշվել գնել շուրջ 24 հազար դոլարանոց մեքենա այն դեպքում, երբ համայնքի բյուջեն այնքան էլ լավ վիճակում չէ: Մեր հարցին ի պատասխան՝ Սափեյանն ասաց. «Նորմալ գին է: Ի՞նչն է խնդիրը, ես ուզում եմ հասկանալ: Մենք այնպիսի մեքենա ենք ձեռք բերել, որ հինգ տարվա ընթացքում նույն մեքենան ծառայի համայնքին եւ գործերը թեթեւացնի»: Հավելենք, որ այս տարվա սեպտեմբերի 27-ին Տավրոս Սափեյանը վթարի էր ենթարկվել Երեւանի Հրազդանի կիրճում: Ըստ ամենայնի, համայնքի ղեկավարը նոր մեքենայի կարիք ունի, քանի որ իր մեքենան դիմացի ավտոմեքենայի ուժգին հարվածից լուրջ վնասներ է կրել:

ԵՌԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ

# ԱԴՐԲԵՋԱՆԸ ՊԵՏՔ Է ՎԵՐԱԿԱՆԳՆԻ

**Դեկտեմբերի 11-ից քաղաքացիական հագուստով մի խումբ ադրբեջանցիներ, ներկայանալով որպես բնապահպան ակտիվիստներ, շինծու բնապահպանական մտահոգությունների պատրվակով փակել են Արցախը Հայաստանի եւ աշխարհի հետ կապող միակ ճանապարհը՝ Լաչինի միջանցքը: Այս ընթացքում Ադրբեջանին Լաչինի միջանցքը բացելու կոչեր եւ հայտարարություններ հնչեցին տարբեր երկրների եւ կազմակերպությունների կողմից: Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհը Ադրբեջանի կողմից արգելափակելու պատճառով ԱՀ առողջապահության նախարարության ենթակայության տակ գործող բուժհաստատություններում շարունակում են դադարեցված մնալ պլանային վիրահատությունները:**



«Առաջին բուժօգնության համար անհրաժեշտ դեղերի եւ բժշկական պարագաների պակաս այս պահին չկա, բայց մատակարարումը շարունակում է մնալ անհնարին:

ԱՀ ԱՆ Հանրապետական բժշկական կենտրոնում 11 բուժառու գտնվում է ռեանիմացիոն բաժանմունքում, որից 4-ը գտնվում են ծայրահեղ ծանր վիճակում. բժիշկների կողմից կատարվում է հնարավորը հիվանդների վիճակը կայունացնելու համար:

ArmLur.am-ը Լաչինի միջանցքում տիրող իրավիճակի վերաբերյալ զրուցել է նաեւ ՀՀ-ԵՄ բարեկամական խմբի ղեկավար Լուկաս Ֆուրլուասի հետ:

**-Պարո՛ն Ֆուրլուաս, արդեն չորրորդ օրն է՝ Ստեփանակերտ-Գորիս ճանապարհը փակ է, Արցախը կանգնած է հումանիտար աղետի շեմին: Ձեր տեսակետը՝ տիրող իրավիճակի վերաբերյալ:**

-Ցավոք, կան հավաստի տեղեկություններ Լաչինի միջանցքում երթեւեկության խափանումների վերաբերյալ: Դրա հետեւանքով մենք ունենք Լեռնային Ղարաբաղի բնակչության շրջափակում, եւ տարածաշրջանում մատակարարման գիծը խափանված է: Այլ տեղեկություններ կան նույնիսկ բնական գազի մատակարարման ընդհատման մասին: Բոլորս էլ հասկանում ենք, որ իրավիճակը ողբերգական է եւ վերաբերում է կանանց, երեխաներին, հիվանդներին, քրոնիկ հիվանդներին եւ տարեցներին: Սա, անկասկած, հումանիտար ճգնաժամ է, որին պետք է անհապաղ լուծում տալ վատթարագույնից խուսափելու համար:

**-Ըստ Ձեզ՝ ինչո՞ւ Ադրբեջանը գնաց նման քայլի:**

-Հերթական անգամ ականատես ենք լինում Բաքվի կողմից սադրանքի եւ ագրեսիայի. մենք դատապարտում ենք ոչ թե ադրբեջանական ժողովրդին, այլ նրա ավտորիտար բռնապետական ռեժիմը, որը հումանիտար ճգնաժամ է առաջացնում հայ ժողովրդի համար: Բաքվի այս ավտորիտար իշխանությանն ակնհայտորեն աջակցում է Թուրքիան: Անմեղ մարդկանց տառապանք պատճառող ցանկացած սրացում միանգամայն անընդունելի է:

**-Դուք ինչպե՞ս եք տեսնում հարցի կարգավորումը:**

-Տարածաշրջանում հումանիտար ճգնաժամը հնարավոր է կասեցնել միայն մեկ ճանապարհով. Ադրբեջանը պետք է անհապաղ անցնի երթեւեկության եւ էներգամատակարարման ամբողջական վերականգնմանը, միայն այս կերպ հնարավոր կլինի խուսափել տարածաշրջանում հումանիտար իրավիճակի հետագա վատթարացումից: Խաղաղ եւ արդյունավետ լուծում գտնելը իդեալական սցենար է այն սկզբունքների եւ արժեքների համար, որոնց պաշտպանում է Եվրամիությունը:

**-Միջազգային հանրությունն այնքան էլ ակտիվ չէ, եւ դատապարտող հայտարարություններ տեսանք Լաչինի միջանցքը փակվելուց մի քանի օր անց միայն: Ինչո՞ւ է աշխարհը լուռ:**

-Անձամբ ես տարածաշրջանում տիրող իրավիճակի մասին տեղեկացված լինելուն պես քայլեր ձեռնարկեցի՝ գրավոր հարց ներկայացնելով Եվրահանձնաժողովին: Հարցի միջոցով խնդրել եմ հանձնաժողովի անհապաղ միջամտությունը երթեւեկության եւ էներգամատակարարման լիարժեք վերականգնման նպատակով: Անհրաժեշտ է, որ բոլորն իրենց ապահով զգան, եւ բոլոր ներգրավված կողմերի միջեւ երկխոսություն լինի, որպեսզի ապահովվի խաղաղություն եւ կայունություն ողջ տարածաշրջանում:

*Զրուցեց ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ*

ԼՈՒՐԵՐ

## ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

Չնայած ութերորդ գումարման խորհրդարանի աշնանային նստաշրջանն արդեն ավարտվել է, սակայն առաջիկայում արտահերթ նիստեր են սպասվում: Դեկտեմբերի 16-ին արդեն արտահերթ նստաշրջան հրավիրվել էր, սակայն պատգամավորները չեն հասցրել քննարկել այն հարցերը, որոնք կիսատ են մնացել եւ ամբողջությամբ չեն ընդունվել:

Եվ, ահա, ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ ՔՊ-ական պատգամավորներին արդեն զգուշացրել են՝ առաջիկայում՝ մինչեւ ամանորյա տոները, մի քանի նստաշրջան է լինելու, որոնց պետք է մասնակցեն: Այս պահի դրությամբ նստաշրջանի օրակարգը դեռ ամբողջությամբ հայտնի չէ, սակայն հստակ է, որ դրանք լինելու են:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ այսօր՝ ժամը 11.00-ին, կրկին ԱԺ արտահերթ նիստ է հրավիրվել. օրակարգում դատավորների ընտրություններն են: ՔՊ-ականները երեք դատավոր են ընտրելու:

*Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

## ԱՐՑԱԽՈՒՄ ԸՆԿՃՎԱԾ ՉԵՆ

Այս օրերին Արցախում մարդիկ արժանապատիվ կերպով են կրում բոլոր այն զրկանքներն ու խնդիրները, որ ունեն ու առաջիկայում էլ ունենալու են: ArmLur.am-ի հետ զրույցում վստահեցնում է Արցախի ԱԺ «Արդարություն» խմբակցության պատգամավոր Մետաքսե Հակոբյանը: Իրավիճակի ամենավատ կողմն այն է, որ այս պահին Երեւանում իրենց ծնողներից կտրված երեխաներ կան ու ընտանիք վերադառնալ չեն կարողանում:

Հակոբյանն այն տեսակետին է, որ եթե անգամ Բերձորի միջանցքը բացվի, ապա դա դեռեւս չի նշանակում, թե հաջորդ պահին հակառակորդն այն նորից չի փակելու: Ի դեպ, հավելում է՝ հաջորդ անգամ ավելի հուժկու կերպով կարող է փակվել հանգույցը: Մեր զրուցակիցն ընդգծում է՝ սա քաղաքական հարց է, որի անունն, այսպես ասած, «Զանգեզուրի միջանցք» է:

*ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ*

## ՏՈՒԳԱՆԵԼ ԵՆ

Բեռնափոխադրումներով զբաղվող «Գլոբբինգ» ընկերությունից վերջին շրջանում քաղաքացիները սկսել են շատ դժգոհել, եւ խաբեության մակարդակն այնքան է բարձրացել, որ նրանցով զբաղվում են պետական մարմինները: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ընկերությունն արդեն հասցրել է տուգանվել ավելի քան 61 մլն դրամի չափով: Տեղեկացանք, որ քաղաքացիներից մեկը դիմել է Մրցակցության պաշտպանության հանձնաժողով եւ հայտնել է, որ ընկերությունն ԱՄՆ-ից ՀՀ օդային առաքման ժամկետ է սահմանել 3-6 աշխատանքային օր եւ չի տրամադրել որեւէ հղում, որ առաքման ժամկետները կարող են զգալի տարբերվել: Մեկ այլ քաղաքացի էլ ներկայացրել է, որ ընկերությունն իր կայքում ԱՄՆ-ից ՀՀ օդային առաքման ժամկետ նշել է 3-4 աշխատանքային օր, որը հետագայում զանգվածային ուշացումների արդյունքում փոխել է 3-9 աշխատանքային օր առաքման ժամկետով: Քաղաքացին պնդում է, որ նույնիսկ այդ պարագայում, ըստ տրամադրած նախնական տեղեկության, ծանրոցը հասանելի է եղել 25 օրում: Ու պարզվում է, այս դեպքը եզակի չէ եւ կրում է զանգվածային բնույթ, իսկ ընկերությունը հրաժարվում է որեւէ կերպով հատուցումից՝ ծանրոցների վերաբերյալ տալով իրարամերժ պատասխաններ: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ քաղաքացիներից մեկն էլ հաղորդում է ներկայացրել հետեւյալի մասին. ընկերությունը կայքում նշում է, որ ԱՄՆ-ից ՀՀ «Էքսպրես» առաքումը կատարում է 3-9 աշխատանքային օրում, մինչդեռ տվյալ քաղաքացու ծանրոցը, որը 2022 թվականի հուլիսի 16-ին առաքվել է ընկերության ԱՄՆ պահեստ, մինչեւ օգոստոսի 10-ը դեռ չի հասել ՀՀ: Նշենք, որ Հանձնաժողովը վարույթը հարուցել է ընկերության կողմից ԱՄՆ-ից ՀՀ օդային եւ ծովային առաքումների ծառայությունների համար գործնականից տարբերվող ժամկետ հայտարարելու միջոցով հասարակության մոլորեցման դրսեւորումներով անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերեւույթ առկայության հիմքով: Ըստ ընկերության հիմնավորման՝ իրենցից անկախ պատճառներով առանձին դեպքերում այդ ժամկետները չեն պահպանվում:

## 224 ԶՈՀ

Սեպտեմբերի 13-14-ի ադրբեջանական հարձակման հետեւանքով հայկական կողմի զոհերի թիվը 224 է: Քննչական կոմիտեի մամուլի խոսնակ Գոռ Աբրահամյանը հայտնել է, որ այս պահի դրությամբ բոլոր 224 զոհերի ինքնությունները պարզված են, նույնականացման գործընթացն ավարտված է: «Բազմակողմանի քննություն է իրականացվում յուրաքանչյուր զոհի մահվան հանգամանքները պարզելու, գնահատական տալու համար»,- ասել է Գոռ Աբրահամյանը: Հիշեցնենք, որ 2022թ.-ի սեպտեմբերի 13-ին՝ ժամը 00:05-ից, Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները սահմանի ողջ երկայնքով հրետանային միջոցներից, խոշոր տրամաչափի հրաձգային զինատեսակներից սկսել էին ինտենսիվ կրակ վարել հայկական դիրքերի ուղղությամբ՝ կիրառելով նաեւ ԱԹՍ-ներ: Հակառակորդը հարվածում էր թե՛ ռազմական, թե՛ քաղաքացիական օբյեկտներին:

## ԱԺ ՆԱԽԱԳԱՀԸ

ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը Շվեդիայի Ռիկստագի բարեկամական խմբի եւ ԵԽԽՎ-ում Շվեդիայի պատվիրակության որոշ անդամների կողմից ի պատասխան նամակ է ստացել, որտեղ հասցեական դատապարտվել է ադրբեջանցիների կողմից Լաչինի միջանցքը փակելու հանգամանքը, որը բերել է մարդկային աղետի: այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում նշեց ՀՀ ԱԺ նախագահի մամուլի խոսնակ Ծովինար Խաչատրյանը: Մասնավորապես, վերջինիցս հետաքրքրվել ենք, թե, որպես ՀՀ ԱԺ նախագահ, այս օրերին ինչ է արել Ալեն Սիմոնյանը, ինչ բանակցություններ է մասնակից եղել:

Ի պատասխան՝ Ծովինար Խաչատրյանն ասաց, թե նույնանման բովանդակությամբ նամակներ են ուղարկվել տարբեր երկրների խորհրդարանների ղեկավարներին: «Բոլոր միջազգային գործընկերներին ուղարկվել է նույն բովանդակությամբ տեքստեր: Նամակներ ուղարկելուց հետո նաեւ հասցեական պատասխաններ ենք ստանում: Բացի Շվեդիայից, արձագանքներ են եղել նաեւ այլ երկրների խորհրդարաններից, ճշտող զանգեր ենք ստացել եւ այժմ էլ դեռ արձագանքներ ենք սպասում»,- նշեց նա: Ծովինար Խաչատրյանն ընդգծեց՝ելնելով իր պաշտոնի առանձնահատկությունից՝ Ալեն Սիմոնյանն անձամբ բանակցություններ չի վարում, սակայն այս օրերին աշխատում է միջազգային ասպարեզում:

## ԹՌՉՆԱՖԱԲՐԻԿԱՅԻ ՏՆՕՐԵՆԻՑ՝ ՆԱԽԱՐԱՐ

Երեկ հայտնի դարձավ, որ Հայաստանը ֆինանսների նախարարությունը նոր ղեկավար կունենա: Խոսքը նախորդ տարվա օգոստոսին նախարարի տեղակալ նշանակված Վահե Հովհաննիսյանի մասին է: Վահե Հովհաննիսյանը ծնվել է 1980 թվականին Երեւանում, ավարտել է Երեւանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը, ծառայել է ՀՀ զինված ուժերում, ունի հինգ երեխա:

Տեղեկացնենք, որ Հովհաննիսյանն իր աշխատանքային փորձը սկսել է 1999-2000 ականներից, երբ աշխատել է որպես «Հայէներգոտրանկ» ընկերության կառավարչական հաշվապահության վարչության մասնագետ, ապա զբաղեցրել է «Լուսակաթ» թռչնաբուծական ֆաբրիկայի ֆինանսական բաժնի ղեկավարի պաշտոնը: Թռչնաֆաբրիկայում Հովհաննիսյանը մեկ տարի է աշխատել: Արդյոք Հովհաննիսյանը, պետական համակարգում նորեկ լինելով, կկարողանա ղեկավարել Հայաստանի ֆինանսների ոլորտը՝ցույց կտա ժամանակը: Բացի այս, նորանշանակ նախարարը աշխատել է նաեւ «Ալֆա փլաս», «Օրանժ Արմենիա» ընկերություններում: Նա նաեւ փորձագետ աշխատել է Ասիական զարգացման բանկում: 2020-2021 թվականներին բազմազավակ Հովհաննիսյանը զբաղեցրել է Ասիական զարգացման բանկի տնօրենի խորհրդականի պաշտոնը: 2018-2019 թվականներին Հովհաննիսյանը վարչապետի խորհրդականն է եղել՝ հասարակական հիմունքներով:

ԱՊԱՑՈՒՅՑ

# Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԻ ՀԵՏՔԵՐՈՎ

**Կրթության, գիտության, մշակույթի ու սպորտի նորանշանակ նախարար Ժաննա Անդրեասյանի՝ դեռեւս փոխնախարար եղած ժամանակ Երեւանի քաղաքապետարանին ու ՀՀ մարզպետարաններին հասցեագրված շրջաբերականը, որ «Ժողովուրդ» օրաթերթի ձեռքում էր հայտնվել, բավականին մեծ աղմուկ է առաջացրել: Հիշեցնենք, որ, այդ շրջաբերականի համաձայն, դպրոցներում հետայսու կարող է արգելվել ռազմահայրենասիրական բոլոր տեսակի խմբակների գործունեությունը, քանի որ, ըստ ԿԳՄՍ-ի՝ մարզպետարանների գլխավոր քարտուղարներին ու Երեւանի փոխքաղաքապետին ուղարկված շրջաբերականի, «դպրոցները պետք է խուսափեն ռազմական օգտագործումից»:**




Տիկին Անդրեասյանի անմիջական հրահանգով՝ նախարարության լրատվական ծառայությունը գերատեսչության պաշտպանող հրապարակմամբ էր հանդես եկել՝ փորձելով հերքել, թե նման շրջաբերական է եղել: Նախարարությունը, սակայն, դա արել է մանիպուլատիվ եղանակով. «Ժաննա Անդրեասյանի՝ նախարարի պաշտոնում նշանակվելուց հետո «Անվտանգ դպրոցներ» միջազգային հռչակագրի վերաբերյալ որեւէ շրջաբերական գրություն ՀՀ հանրակրթական դպրոցներին չի ուղարկվել»: «Ժողովուրդ» օրաթերթը չի էլ գրել, թե վերոնշյալ շրջաբերականը հանրակրթական դպրոցներին է ուղարկվել, այլ նշել էինք՝ մարզպետարաններին, ավելի կոնկրետ՝ մարզպետարանների գլխավոր քարտուղարներին է հասցեագրվել:

«Հայ ասպետ» կրթադաստիարակչական հիմնադրամի տնօրեն Կարին Տոնոյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հաստատեց, որ նախարարության կողմից տարածված, այսպես ասած, «պարզաբանումը» ոչ այլ ինչ է, քան աղմուկից հետո իրավիճակը մեղմացնելու փորձ: Ինչ վերաբերում է դպրոցներում ռազմահայրենասիրական դաստիարակության հետ կապված հարցերին, ապա, Տոնոյանի խոսքով, «Հայ ասպետ» դպրոցի դահլիճում բարձր հասարակի երեխաներն անցնում են մարտական պատրաստություն: «Եվ եթե հազար նախարար էլ փոխվի, մենք դա անելու ենք: Ես դա հրապարակավ էլ, առանց վախենալու ասում եմ: Մենք նամակ էինք ստացել նախարարությունից, որ դպրոցների դահլիճներն այսուհետ չեն տրվելու նման խմբերի: Դուք գիտեք, որ դպրոցների մարզադահլիճները վարձում են այդ խմբերն ու մարզումներ անցկացնում, քանի որ այլ տեղ հնարավոր չէ նման բան կազմակերպել, մանավանդ՝ ձմռանը: Մեզ նման պատերազմող երկրի համար այդպիսի խմբակները ու բանակային կյանքի նախապատրաստելը կարեւոր է: Չտիրապետել այդ ամենին հանցագործություն է: Ես պարտադրում եմ իմ սաներին տիրապետել ռազմական, զինվորական այդ հմտություններին, քանի որ նրանք ավարտում ու գնում են բանակ, որ գոնե ինչ-որ կերպ պատրաստված լինեն... Գոնե տարրական բաներ չիմանա՞ն: Ավելին ասեմ՝ պետականորեն պետք է կազմակերպել եւ պարտադրել, որ երեխաները սովորեն, հմտանան»,- նշում է Տոնոյանը: Նախարարության առաջ բերած այն դիտարկմանը, թե «ուսումնական հաստատության թիրախավորման վտանգը բարձրանում է, երբ դրա տարածքում տեղակայվում է ռազմական բնույթի կառույց», մեր զրուցակիցն արձագանքում է. «Կչկչան հավի տեղը առաջինն են իմանում, իսկ դուք (նախարարությանը նկատի ունի- հեղ.) ինչո՞ւ եք կչկչում, որ մեր թշնամին էլ իմանա, թե դպրոցների դահլիճներն ինչի համար են օգտագործում»: Իսկ որպեսզի նման թյուրըմբռնում չլիներ, ապա, Կարին Տոնոյանի համոզմամբ, նախարարը պետք է հրավիրեր դպրոցի տնօրեններին ու խորհրդակցեր նրանց հետ: «Հարգելի՛ նախարար, որ Դուք ոչ կոմպետենտ եք, մենք բոլորս գիտենք, որ իշխանություններն արհեստավարժ չեն, դա էլ գիտենք: Կանչեիք, ասեիք՝ ինչպե՞ս անենք, որ նաեւ այս աղմուկը չբարձրանար: Բայց իրականությունը այն է, որ նրանք իրենց տերերին ցանկանում են ցույց տալ, որ մենք ապառազմականացնում ենք հասարակությանը, եւ մեզ պատրաստում են «խաղաղության պայմանագրի»: Նրանք ուզում են ցույց տալ, որ այլեւս երբեք զինված ատամ ցույց չենք տալու: Իհարկե, աղմուկից հետո նրանք փորձել են մեղմացնել իրավիճակը»,- ամփոփում է մեր զրուցակիցը:

*ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ*

ՕՐՎԱ ԽԾԱՆԿԱՐ

## ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի՝ դեկտեմբերի 19-ի հրամանով՝Գորիսի կայազորի զինվորական դատախազությունում (նախկինում՝ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազություն) ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ նշանակվել է «նկատողություն» տեսակի կարգապահական տույժ:

Այս մասին տեղեկացնում է Գլխավոր դատախազության հանրային կապերի բաժինը:

Կարգապահական վարույթի շրջանակում հաստատվել է, որ Գորիսի կայազորի զինվորական դատախազության դատախազը (նախկինում՝ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության դատախազ), առանց հարգելի պատճառի, պարբերաբար բացակայել է դատական նիստերից, իսկ իր մասնակցությամբ առաջին դատական նիստին ներկայացել է առանց գործի նյութերին ծանոթանալու, ինչի պատճառով դատական նիստը հետաձգվել է:

## ՆԱՄԱԿՈՎ Է ԴԻՄԵԼ

ԱՄՆ կոնգրեսական Ֆրենկ Փելոնն իր գործընկերների հետ համատեղ նամակով դիմել է նախագահ Ջո Բայդենին՝կոչ անելով ապահովել Արցախի ժողովրդի անվտանգությունը:

«Գործընկերներիս հետ միասին նամակ եմ հղել նախագահին՝ կոչ անելով գործողություններ ձեռնարկել՝ ապահովելու Արցախի ժողովրդի անվտանգությունն այն բանից հետո, ինչ Ադրբեջանն արգելափակել է Լաչինի միջանցքը՝Լեռնային Ղարաբաղը Հայաստանին կապող միակ ճանապարհը՝ վտանգելով հազարավոր մարդկանց»,- գրել է Փելոնը:

## ՊԱՇՏՈՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Տեղի է ունեցել Երեւանի քաղաքապետարանի հերթական գործակարգավարական խորհրդակցությունը:

Մինչ գործակարգավարականին անցնելը Երեւանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը ներկայացրեց Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի նոր ղեկավարին:

Շրջանի նոր թաղապետ է նշանակվել Արման Բարխուդարյանը: Նշենք, որ Արման Բարխուդարյանը մինչ այս պահը զբաղեցնում էր ԱԺ փոխնախագահի Ռուբեն Ռուբինյանի խորհրդականի պաշտոնը:

ԻՐԱՎԻՃԱԿ Է ՓՈԽՎԵԼ

# ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ՈՒ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

**2021թ. հունվարին գործադիրը հավանություն տվեց դատական ոլորտին վերաբերող մի շարք օրենքների փոփոխությունների, որոնցով նախատեսվում էր կալանքներ, խուզարկություններ եւ օպերատիվ հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին բոլոր միջնորդությունների քննություն մասնագիտացված դատավորների միջոցով:**



Բացի դա, ըստ հեղինակների՝ կար եւս մեկ խնդիր. դատավորների հերթապահության պատճառով շատ դեպքերում կանխատեսելի է դառնում կալանքի միջնորդությունը քննող դատավորի անձը, որն էլ իր հերթին խնդրահարույց է կոռուպցիոն հնարավոր ռիսկերի առաջացման համար: Սա Բարձրագույն դատական խորհրդի (ԲԴԽ) նախկին նախագահ Գագիկ Ջհանգիրյանի միտքն էր, որով նա կառավարում էր հատկապես քաղաքական գործերով ստացվող վճիռները:

Եվ, ահա, Վերաքննիչ քրեական դատարանը ուներ «կալանք տվող կոնկրետ դատավորներ»:

Վեց դատավորներից 3-ը նշանակվել էին իրավաբան-գիտնականների քվոտայով: Ընդ որում՝ ի սկզբանե հայտարարվել էր մրցույթ, եւ 3 տեղի համար ընտրվել էր 2 դատավոր՝ Տիգրան Սիմոնյանն ու Լուսինե Հովհաննիսյանը: Հաջորդիվ 3-րդ հաստիքը համալրելու համար եւս մեկ մրցույթ էր հայտարարվել, եւ հաղթել էր նախկին դատախազ Կարեն Բիշարյանը:

Մյուս 3 դատավորները Վերաքննիչ քրեական դատարանի դատավորների գործող կազմից էին ընտրվել առաջխաղացման ցուցակներով: Նրանք էին Արմեն Դանիելյանը, Ռուբիկ Մխիթարյանը եւ Մնացական Հարությունյանը:

Շաբաթը, սակայն, ուրբաթից շուտ եկավ: Գագիկ Ջհանգիրյանի հեռանալուց հետո ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի նախագահ ընտրվեց Մխիթար Պապոյանը, ինչի արդյունքում ՀՀ վերաքննիչ դատարանում սկսվեց հեղափոխություն. Մխիթար Պապոյանը կարողացել է հասնել նրան, որ Վերաքննիչ քրեական դատարանում այսուհետ կալանքի գործեր քննեն ոչ թե վերոնշյալ 6 դատավորները, այլ բոլորը, բացառությամբ Միեր Արղամանյանի եւ Սեւակ Համբարձումյանի:

Վերաքննիչ քրեական դատարանի նախագահը ԲԴԽ-ում կարողացել է օրենսդրական հիմնավորումներ ու փաստարկներ ներկայացնել առ այն, որ Վերաքննիչում կալանքի գործեր քննեն ոչ թե 6, այլ 18 դատավորներ:

Միեր Արղամանյանը չի կարող կալանքի գործեր քննել, որովհետեւ վերջինիս որդին՝ Դավիթ Արղամանյանը, ստորադաս ատյանում է աշխատում որպես «կալանք տվող» դատավոր, իսկ Սեւակ Համբարձումյանի արգելքի պարագան այլ է:

Փաստ է մեկ բան. մինչ դատական համակարգում փորձում են կալանք տվող դատարանը փակել, Վերաքննիչ քրեական դատարանում արդեն իսկ սկսել են բեկանվել առաջին ատյանի «կալանք տվող» դատավորների ակտերը, ասել է թե՝ քաղաքական իշխանությունները հիմա կրկին գլխացավանք կունենան՝ հատկապես քաղաքական գործերով ցանկալի վճիռներ ստանալու հարցում: Ի՞նչ է սպասվում Մխիթար Պապոյանին, եւ արդյոք այս քայլից հետո նրա նկատմամբ արշավ չի սկսվի քաղաքական իշխանությունների կողմից: Մեզ հետ զրույցում Մխիթար Պապոյանն ասաց, որ դա հեղափոխություն չէր, պարզապես իրենց ձայնը լսելի դարձավ:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

# «ԲՆԱՊԱՀՊԱՆՆԵՐԻ» ԿԵՍԸ՝ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱԱԾ-ԻՑ

**Ադրբեջանը հետամնդում է Արցախի Հանրապետության տնտեսության հիմքերը խարխլելու, բնակչությանը եկամտի աղբյուրից, աշխատատեղերից զրկելու նպատակ. այս մասին հայտարարություն է տարածել Արցախի դատախազությունը:**

Դատախազության հայտարարության մեջ նշվում է. «Սույն թվականի դեկտեմբերի 12-ից Ադրբեջանի մի խումբ քաղաքացիներ, ներկայանալով որպես բնապահպաններ, կեղծ պատրվակով ապօրինաբար զավթել են Արցախը Հայաստանին կապող ճանապարհը՝ այդկերպ դադարեցնելով երթեւեկությունը եւ խզելով արտաքին աշխարհի հետ Արցախի քաղաքացիների միակ կապը: Երկու օր շարունակ Ադրբեջանը դիտավորությամբ դադարեցրել էր նաեւ ՀՀ-ից Արցախ գազի մատակարարումը:

Հիշյալ դեպքերի կապակցությամբ ԱՀ գլխավոր դատախազության կողմից անհապաղ նախաձեռնվել են քրեական վարույթներ, որոնց շրջանակում ձեռնարկված քննչական, այդ թվում՝ ԱՀ ազգային անվտանգության ծառայության կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակում ձեռք բերված փաստական տվյալներով հիմնավորվել է, որ՝

- Ստեփանակերտ-Գորիս ճանապարհը զավթած Ադրբեջանի քաղաքացիների գերակշռող մեծամասնությունը եւ ղեկավարող կազմը հատուկ ծառայությունների նախկին կամ ներկա աշխատակիցներ են,
- բարձրաձայնվող բնապահպանական խնդիրը ընդամենը օգտագործվում է որպես սեփական արարքները արդարացնելու եւ դրանց հիմնավոր տեսք հաղորդելու միջոց,
- Ադրբեջանը հետապնդում է Արցախի Հանրապետության տնտեսության հիմքերը խարխլելու, բնակչությանը եկամտի աղբյուրից, աշխատատեղերից զրկելու նպատակ,
- Ադրբեջանի քաղաքացիների կողմից իրականացվող գործողությունները հակասում են 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության դրույթներին, դրանով արձանագրված ստատուս-քվոյին,
- Արցախի Հանրապետության քաղաքացիները՝ որպես այդ տարածքի բնիկ ժողովուրդ եւ իրավատեր, միջազգային իրավունքի ուժով ունեն այդ տարածքի հողի, շրջակա բնական միջավայրի, բնության եւ ընդերքի տնօրինման, տիրապետման եւ օգտագործման իրավունք, որը Ադրբեջանը փորձ է անում անտեսել ու չեզոքացնել»:

ԼՈՒՐԵՐ

## ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արցախում ծանր վիճակում գտնվող 4 ամսական երեխային չեն կարողանում տեղափոխել Երեւան Լաչինի ճանապարհին ադրբեջանցիների կողմից փակ պահելու պատճառով. այս մասին ArmLur.am-ին հայտնեցին Արցախի բժշկական կենտրոնից:

«Երեխայի առողջական վիճակը գնահատվում է կայուն ծանր, մենք հնարավորինս ամեն ինչ անում ենք վիճակը կայունացնելու համար, կապի մեջ ենք Երեւանի մեր բժիշկների հետ, որը շատ մեծ օգնություն է, բայց սովորաբար նման դեպքերում մենք ուղարկում ենք Երեւան, ինչը հիմա հնարավոր չէ: Երեխայի մոտ ախտորոշվել է բարդ տեսակի ինֆեկցիոն հիվանդություն»,- ասացին հիվանդանոցից:

Նշենք, որ ավելի վաղ գրել էինք, որ Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհը Ադրբեջանի կողմից արգելափակելու պատճառով ԱՀ առողջապահության նախարարության ենթակայության տակ գործող բուժհաստատություններում շարունակում են դադարեցված մնալ պլանային վիրահատությունները:

*ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ*

## ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Ոստիկանության Արտաշատի բաժնի անչափահասների գործերով եւ ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքում տեղեկություն էր ստացվել, որ դեկտեմբերի 8-ի երեկոյան Մխչյան գյուղում դանակահարություն էր եղել: Նույն օրը հաղորդում է ստացվել Արտաշատ բժշկական կենտրոնից. կրծքավանդակի ծակած-թափանցող, արնահոսող վերքով բուժօգնության էր ընդունվել Ոստան գյուղի բնակիչ 47-ամյա մի տղամարդ:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ քննչական գործողությունների արդյունքում պարզվել է, որ դեկտեմբերի 8-ին՝ ժամը 19:30-ի սահմաններում, Մխչյան գյուղի Արտաշիսյան փողոցի կանգառում Արտաշատ քաղաքի բնակիչ 55-ամյա տղամարդը ձեռքերով խփել էր նախկին կնոջը եւ գրպանից հանելով դանակը՝ սպառնացել սպանել նրան, այնուհետեւ դանակահարել էր վեճին միջամտած նախկին կնոջ եղբորը՝ պատճառելով կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնաս:

Դեպքի առթիվ Արարատի մարզային քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ:

Ոստիկանության Արտաշատի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում դեկտեմբերի 10-ին Արտաշատ քաղաքի Խաչատրյան փողոցի տներից մեկի մոտ 55-ամյա տղամարդը հայտնաբերվել, ձերբակալվել եւ տարվել է Արտաշատի բաժին, որտեղ խոստովանել է հանցարարքը: Նա ներկայացվել է Արարատի մարզային քննչական վարչություն եւ տվել խոստովանական ցուցմունք: Նախաձեռնված քրեական վարույթը շարունակվում է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 16-ից 19-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 106 դեպք, որոնցից 7-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

## 51 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄԻ ՎՆԱՍ

Հրանտ Ղալթախչյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով առեւտրային կազմակերպության ծառայող՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի Իջեւանի մասնաճյուղի կառավարիչ, համաձայնության գալով նույն բանկի ոսկերիչ Գարիկ Մալաքյանի հետ, 2020թ. օգոստոսից մինչեւ 2021թ. մարտի 9-ն ընկած ժամանակահատվածում, թվով 7 վարկառուների՝ Հասմիկ Ստեփանյանի, Մայա Թանանյանի, Անահիտ Մադաթյանի, Արամայիս Միրզոյանի, Դավիթ Լալազարյանի, Արտուշ Ղուկասյանի եւ Մարիետա Ստեփանյանի անվամբ 2,761,1 գրամ ընդհանուր քաշով 583 հարգի ոսկյա իրերի փոխարեն գրավադրել են ընդհանուր 691,6 գրամ, որից 222.1 գրամը՝ 583 հարգի ոսկյա, իսկ 468,9 գրամը՝ այլ մետաղներից պատրաստված իրեր, որոնց քանակի եւ տեսակի վերաբերյալ Գարիկ Մալաքյանի հետ նախնական համաձայնությամբ պատրաստել են ակնհայտ կեղծ պայմանագրեր, որոնք օգտագործելով՝ ստացել են ընդհանուր 51.063.000 ՀՀ դրամ, ինչի հետեւանքով «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին պատճառվել է առանձնապես խոշոր չափի՝ 51.063.000 ՀՀ դրամի գույքային վնաս: Հրանտ Ղալթախչյանին եւ Գարիկ Մալաքյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 277 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով եւ 457 հոդվածի 2-րդ մասով, իսկ բանկի նույն մասնաճյուղի գանձապահ Ալլա Բեկնազարյանին՝ 46- 277 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Հրանտ Ղալթախչյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել գրավը, Գարիկ Մալաքյանի նկատմամբ՝չբացակայելու մասին ստորագրությունը, Ալլա Բեկնազարյանի նկատմամբ՝ բացակայելու արգելքը: Սույն քրեական գործով դատավարության հերթական նիստը Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Իջեւան քաղաքի նստավայրում նշանակված է դեկտեմբերի 20-ին:

## ԿԱԴՐԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բերդ համայնքի ղեկավար Աստղիկ Հակոբյանը դեկտեմբերի 14-ին կայացրած իր որոշումներով կադրային նշանակումներ է արել: Բերդ համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարների մեծամասնությունը վերանշանակվել է այդ պաշտոնում: Պաշտոնից ազատվել են Վարագավան, Չինչին, Նորաշեն, Տավուշ գյուղերի վարչական ղեկավարներ Սամվել Եղիկյանը, Խորեն Ադամյանը, Արտակ Մխիթարյանը, Արթուր Հովհաննիսյանը: Վարագավանի վարչական ղեկավար է նշանակվել Արմեն Աբրահամյանը, Չինչինի վարչական ղեկավար Կարեն Դարբինյանը, Նորաշենի վարչական ղեկավար Գոռ Աբրահամյանը, Տավուշ գյուղի վարչական ղեկավար Թաթուլ Արզումանյանը: Պաշտոնից ազատվել են նաեւ Նավուր գյուղի վարչական ղեկավար Արամ Նիգոյանը, Բերդ համայնքի ղեկավարի տեղակալ Սամվել Հովսեփյանը, համայնքի ղեկավարի օգնական Արտակ Պապյանը:

*Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ՄԱՐԶ

# ՔԱՂԱՔԱՊԵՏԸ ՊՆԴՈՒՄ Է ԻՐ ԱՆՄԵՂՈՒԹՅՈՒՆԸ

**ՀՀ քննչական կոմիտեն հայտարարություն է տարածել, որ այդ կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Դիլիջանի քննչական բաժնում ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով եւ 170-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով քննվող քրեական վարույթի նախաքննության ընթացքում ՀՀ ԱԱԾ-ից ստացված օպերատիվ տվյալների հիման վրա կատարված քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում պարզվել է, որ Իջեւան քաղաքի նախկին քաղաքապետ Վարդան Ղալումյանը, նախապես տեղյակ լինելով, որ ՀՀ պաշտպանության նախարարությունն իր կարիքների համար ցանկանում է ձեռք բերել Իջեւանի նախկին քաղաքային զորկոմի ենթակայության տակ գտնվող շինվերանորոգման վարչության տարածքը, հնարավորություն ունենալով այն անհատույց տրամադրել ՀՀ պաշտպանության նախարարությանը մինչեւ վերջինիս կողմից համապատասխան ընթացակարգով համայնքին դիմում ներկայացնելը, 2013-2014թթ. ընթացքում շահադիտական նպատակով նշված տարածքը բաժանել է 4 մասի եւ օտարել իր հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց: Վերջիններս հետագայում դրանք անհամեմատ բարձր արժեքներով վաճառել են ՀՀ ՊՆ-ին:**



Պարզվել է նաեւ, որ Իջեւան քաղաքի Արցախյան փողոցի վերը նշված հողատարածքները, ՀՀ կառավարության 21.03.2013թ. թիվ 246-Ն եւ 19.09.2013թ. թիվ 1022-Ն որոշումներով, հանվել են ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված չմասնավորեցվող հողերի կազմից, սակայն հիշյալ որոշումների ընդունման համար Իջեւանի համայնքապետարանից կառավարություն են ներկայացվել իրականությանը չհամապատասխանող հիմնավորումներ: ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Դիլիջանի քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 4-րդ կետերով, 445-րդ հոդվածի 2-րդ մասով եւ 283-րդ հոդվածի 2-րդ մասին 1-ին եւ 2-րդ կետերով նախաձեռնվել է նոր քրեական վարույթ, որը քննչական ենթակայության կարգով ուղարկվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե: Իջեւանի նախկին քաղաքապետ, այդ պաշտոնից 2019թ. սեպտեմբերի 5-ին հրաժարական տված Վարդան Ղալումյանը անտեղյակ էր վերոհիշյալից, իրավապահները նրան այդ մասին չէին ծանուցել: Նա իրեն մեղավոր չի համարում, Քննչական կոմիտեի հաղորդագրության մեջ նշված, իր հետ «փոխկապակցված անձանց» բառակապակցության մասին նշեց, որ Իջեւանը փոքր քաղաք է, բոլորն իրար ճանաչում են, ինքը ՏԻՄ ընտրություններին շուրջ 8000 մասնակցածների 6500-ի քվեները ստացել է, այդ բոլոր մարդկանց կարելի է իր հետ փոխկապակցված համարել: Նա հերքեց այն, որ ինքը կառավարություն է ներկայացրել իրականությանը չհամապատասխանող չհիմնավորումներ՝ ասելով, որ Տավուշի մարզպետարանը, համապատասխան նախարարությունները ստուգել, հաստատել են այդ հիմնավորումների իսկությունը: Վ. Ղալումյանը հայտարարեց, որ ինքը չի օտարել համայնքին պատկանող հողամասերը, դա օրենքի սահմաններում արել է համայնքի ավագանին, աճուրդներին, հրապարակային սակարկություններին կարող էր մասնակցել նաեւ ՀՀ ՊՆ-ն: 2019 թվականից Վ. Ղալումյանի նկատմամբ այլ քրեական գործ է քննվում: Նա հայտնեց, որ այդ գործը ո՛չ կարճվում, ո՛չ էլ ընթացք է ստանում, արդեն 3 տարի այդ գործի պատճառով ինքը չի կարողանում կարեւոր գործերով Հայաստանից դուրս գալ:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ԼՈՒՐԵՐ

## ԿԵՂԾ ԹՂԹԱԴՐԱՄՆԵՐ

ՀՀ ոստիկանությունը տեղեկացնում է, որ տարբեր քաղաքացիներից կեղծ 100-դոլարանոցներով գնումներ արած երիտասարդը ձերբակալվել է:

Այս մասին տարածած հաղորդագրության մեջ ասված է. «Ոստիկանության Արաբկիրի բաժնի ծառայողները, իրացնելով օպերատիվ տվյալները, դեկտեմբերի 16-ին Կոմիտասի պողոտայում հայտնաբերել, կեղծ թղթադրամներ պատրաստելու, իրացնելու եւ պահելու կասկածանքով ձերբակալել եւ բաժին էին տեղափոխել 20-ամյա մի երիտասարդի: Անձնական խուզարկությամբ նրա մոտ հայտնաբերվել էին 19 հատ 100-դոլարանոց, 2՝ 20,000-դրամանոց, եւ 2՝ 1000-դրամանոց կեղծ թղթադրամներ: Երիտասարդը եւ հայտնաբերված կեղծ թղթադրամները ներկայացվել էին Արաբկիրի քննչական բաժին: Նախաձեռնվել էր քրեական վարույթ:

Դեկտեմբերի 17-ին՝ ժամը 01:00-ին, ոստիկանության Արաբկիրի բաժնում հաղորդում տված քաղաքացին հայտնել էր, որ List.am կայքում հայտարարություն էր տեղադրել իր երկու «Այֆոն» բջջային հեռախոսները վաճառելու վերաբերյալ: Դեկտեմբերի 12-ին հանդիպել է մի անծանոթ երիտասարդի, որը, հեռախոսների դիմաց չարաշահելով իր վստահությունը, վճարել էր 3000 դոլար կեղծ թղթադրամներով:

Պարզվել է, որ նշված արարքը կատարել էր դեկտեմբերի 16-ին բերման ենթարկված 20-ամյա երիտասարդը:

Դեկտեմբերի 18-ին՝ ժամը 02:00-ին, ոստիկանության Մասիսի բաժնում հաղորդում էր տվել Ղուկասավան գյուղի մի բնակիչ: Նա List. am կայքում հայտարարություն էր տեղադրել ipone pro 14 մոդելի բջջային հեռախոսը վաճառելու վերաբերյալ: Դեկտեմբերի 16-ին հեռախոսը գնելու նպատակով նրան էր զանգել մի երիտասարդ: Հանդիպել էին, եւ վճարելով 1400 դոլար՝ երիտասարդը գնել էր հեռախոսը, իսկ հետագայում ղուկասավանցին հասկացել է, որ 14 հատ 100 դոլար անվանական արժեքով թղթադրամները կեղծ են:

Ձեռնարկված օպերատիվ միջոցառումների արդյունքում պարզվել է, որ արարքը կատարել էր նույն՝ դեկտեմբերի 16-ին ոստիկանության Արաբկիրի բաժին բերման ենթարկված 20-ամյա երիտասարդը:

Արաբկիրի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ: 20-ամյա երիտասարդը ձերբակալվել է:

## ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ԿԱՐԳԵԼՎԻ

ՀՀ կառավարությունն առաջարկում է արգելել Հայաստանի Հանրապետությունից մի շարք գյուղատնտեսական արտադրատեսակների արտահանումը: ArmLur.am-ը տեղեկացավ, որ Հայաստանից 6 ամսով կարգելվի ցորենի, մեսլինի, գարու, եգիպտացորենի, հնդկացորենի, արեւածաղկի սերմի, արեւածաղկի ձեթի արտահանումը: Ըստ Էկոնոմիկայի նախարարության հիմնավորման՝ այս ապրանքների մասով ներքին արտադրությունը չի բավարարում ՀՀ շուկայի պահանջարկը:

Տեղեկացնենք, որ այն ապահովվում է հիմնականում ներմուծման ծավալների հաշվին: Բացի այս, նշված ապրանքների մասով արտահանումը Հայաստանից երրորդ երկրներ աննշան է:

*ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ*

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 35 ՃՏՊ. 2 մարդ զոհվել է, 56-ը ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (3)

**Աճուրդ-վաճառք**

Գայանե Քաջիկի Ռեզյանին պատկանող՝ ստորեվ նշված անշարժ գույքը հրապարակային սակարկություններով (աճուրդ) վաճառելու մասին

Գայանե Քաջիկի Ռեզյան անհատ ձեռնարկատիրոջ (այսուհետ՝ Պարտապան) սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 12.01.2023 թվականին ժամը 15:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի 11.03.2020թ. ՍՆԴ/0403/04/19 վճռով սնանկ ճանաչված Գայանե Քաջիկի Ռեզյան անհատ ձեռնարկատիրոջ ստորեւ նշված շարժական գույքի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտով.

Լոտ 1 - Պարտապան Գայանե Քաջիկի Ռեզյան անհատ ձեռնարկատիրոջ կողմից Աշխեն Արշակյանի հանդեպ ունեցած պարտավորությունների կատարման համար գրավադրված եւ Գայանե Քաջիկի Ռեզյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, ք.Երեւան, Կենտրոն Նորագյուղ թաղամաս 126/2 բնակելի տուն հասցեում գտնվող անշարժ գույքը ((համաձայն գնահատման հաշվետվության շինության հնդհանուր տեխնիկական վիճակը գնահատվել է անբավարար), Սեփականության իրավունքի վկայական՝01072015-01-0151, տրված՝ 01.07.2015 թվականին, կադաստրային ծածկագիրը 01-006-0711-0073, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման, հողամասի չափը՝ 0,010454 հա, իրավունքի տեսակը՝ սեփականություն):

Մեկնարկային գինը ՝ 4,315,680 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված գույքի վրա առկա է «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ եւ հանդիսանում է գրավի առարկա:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման Գայանե Քաջիկի Ռեզյան անհատ ձեռնարկատիրոջ սնանկության գործով թիվ 2480103328850000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝ հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (հեռ.՝ 060 500 250, էլ. Փոստ՝ makar.yeg@gmail.com)՝աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- Վայոց ձորի մարզ, համայնք Ջերմուկ, Ջերմուկ ք., Զախափնյակ թաղամաս, 42 շենք, 24 հասցեում գտնվող 71.1 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 7060000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Մասիս ք., Նոր թաղամաս, 14 շենք, 48 հասցեում գտնվող 94 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝19150000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Նոր Խարբերդ, 4-րդ փողոց, 27 հասցեում գտնվող 107,2 ք.մ. բնակելի տուն, 4,7 քմ., կաթսայատուն, 46,8 ք.մ. կիսակառույց, 18,1 ք.մ. ծածկ եւ 0,1364 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 26000000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք., Գ. Նժդեհի փողոց, 3-րդ նրբանցք, 1 հասցեում գտնվող 211,8 ք.մ. բնակելի տուն, 21,8 ք.մ. ավտոտնակ, 15,6 ք.մ. ծածկ, 14,5 ք.մ./37,7 խ.մ./ պարիսպ եւ 0,0551 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝60300000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք., Տիգրան Մեծի պողոտա, 34 շենք, 21 հասցեում գտնվող 64,68 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 15050000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Գորիս, Գորիս ք., Վանքի տափ փողոց, 12 հասցեում գտնվող 590,3 ք.մ. բնակելի տուն (արտաքին մակերեսը կազմում է 715,8 ք.մ.) եւ 0,0711 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 45370000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Սիսիան, Սիսիան ք., Սայաթ-Նովայի փողոց, 20բ հասցեում գտնվող 224,8 ք.մ. բնակելի տուն, 9 ք.մ. խոհանոց, 9 ք.մ. բաղնիք, 60 ք.մ. անասնաշենք եւ 0,06 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝17140000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Կապան, Կապան ք., Մ. Հարությունյան փողոց, 12 շենք, 69 հասցեում գտնվող 78,2 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 11330000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Մեղրի, Մեղրի ք., Զ.Անդրանիկի փողոց, 32 շենք, 23 հասցեում գտնվող 56,8 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 8420000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Քաջարան, Քաջարան ք., Խանջյան փողոց, 6 շենք, 22 հասցեում գտնվող 87,5 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝14860000 ՀՀ դրամ:
- Տավուշի մարզ, համայնք Իջեւան ք., Բլբուլյան փողոց, 85 շենք, 14 հասցեում գտնվող 67 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝11630000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Գառնի, Զ. Անդրանիկի փողոց, 18 հասցեում գտնվող 393,9 ք.մ. բնակելի տուն, 6,9 ք.մ. կաթսայատուն, 10,54 ք.մ. թոնրատուն եւ 0,142 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 33100000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Աբովյան, գյուղ Առինջ, Մաշտոցի փողոց, 1-ին նրբանցք, 19 հասցեում գտնվող 162,7 ք.մ. բնակելի տուն, 2,5 ք.մ. /5,5 խ.մ./ պարիսպ, 1,0 ք.մ. ինքնակամ ջրավազան, 5,8 ք.մ. ինքնակամ ծածկ եւ 0,03759 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 29900000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Էրեբունի, Էրեբունու փողոց, 3 շենք, 11 հասցեում գտնվող 30,4 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝12960000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Էրեբունի, Ավանեսովի փողոց, 2 շենք, 38 հասցեում գտնվող 64,5 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝25400000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Աջափնյակ, Մ. Մազմանյան փողոց, 18 շենք, 2 հասցեում գտնվող 75,2 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝33800000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Արաբկիր, Սունդուկյան փողոց, 15ա շենք, 27 հասցեում գտնվող 91,4 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝42200000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակի 7-րդ փողոց, 1-ին նրբանցք, 4 հասցեում գտնվող 86,4 ք.մ. բնակելի տուն, 2 ք.մ. /4,8 խ.մ./ պարիսպ եւ 0,017528 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 26600000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Քանաքեռ-Զեյթուն, Քանաքեռցու փողոց, 131/2 շենք, 35 հասցեում գտնվող 64.2 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝21600000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի ք., Բաղրամյան թաղամաս, 5 շենք, 10 հասցեում գտնվող 80,4 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝8200000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Կապան, Կապան ք., Շինարարների փողոց, 11 շենք, 28 հասցեում գտնվող 44,5 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 6900000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա, Արարատյան 1-ին զանգված, 6 շենք, 40 հասցեում գտնվող 55,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 20200000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Շենգավիթ, Ա. Չեխովի փողոց, 23 շենք, 46 հասցեում գտնվող 67,78 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝22060000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Էրեբունի, Ռոստովյան փողոց, 21 շենք, 52 հասցեում գտնվող 32,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝17040000 ՀՀ դրամ:
- Արագածոտնի մարզ, համայնք Ապարան, Ապարան ք., Ն. Ստեփանյան փողոց, 60 հասցեում գտնվող 257,1 ք.մ. բնակելի տուն, 94,5 ք.մ. անասնաշենք, 11 ք.մ. կաթսայատուն եւ 0,107 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝20300000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Արտաշատ ք., Արագի փողոց, 9 շենք, 5 հասցեում գտնվող 74 ք.մ. բնակարան եւ 27,87 ք.մ. ինքնակամ կառույց: Լոտի մեկնարկային գինը՝17560000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Արտաշատ, Արտաշատ ք., Ներսիսյան փողոց, 1 շենք, 22 հասցեում գտնվող 79,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 20100000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Գորիս, Գորիս ք., Գ. Նժդեհի փողոց, 18 շենք, 16 հասցեում գտնվող 91,1 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 15300000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ ք., Շիրվանզադեի փողոց, 5/1 հասցեում գտնվող 122,4 ք.մ. բնակելի տուն, 12,2 ք.մ. կաթսայատուն, 5,3 ք.մ. թռչնանոց, 21,6 ք.մ. ծածկ, 0,2 ք.մ. 2,3 խ.մ. պարիսպ, 22 ք.մ. ծածկ եւ 0,0381 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 14600000 ՀՀ դրամ:
- Տավուշի մարզ, համայնք Իջեւան ք., Բլբուլյան փողոց, 95 շենք, 17 հասցեում գտնվող 69,5 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝12100000 ՀՀ դրամ:
- Տավուշի մարզ, համայնք Իջեւան ք., Ս. Օհանյան փողոց, 1-ին նրբանցք, 32 հասցեում գտնվող 198,77 ք.մ. բնակելի տուն եւ 0,04 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝22100000 ՀՀ դրամ:
- Տավուշի մարզ, համայնք Իջեւան ք., Ե. Չարենցի փողոց, 37 հասցեում գտնվող 239,6 ք.մ. բնակելի տուն, 22,8 ք.մ. փուռ, 3,5 . /7 խ.մ./ պարիսպ եւ 0,1 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝18840000 ՀՀ դրամ:
- Արագածոտնի մարզ, համայնք Աշտարակ ք., Գ. Նժդեհի փողոց, 12 հասցեում գտնվող 286,3 ք.մ. բնակելի տուն, 1,5 ք.մ. զուգարան, 0,82 ք.մ. /1,64 խ.մ./ պարիսպ, 86,86 ք.մ. ինքնակամ կառուցված շինություններ եւ 0,0897 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 35800000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Աջափնյակ, Նորաշեն թաղամաս, 18 շենք, 84 հասցեում գտնվող 61 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝20200000 ՀՀ դրամ:
- Շիրակի մարզ, համայնք Անի, Մարալիկ ք., Կոլտնտեսականների փողոց, 5-րդ նրբանցք, 5 հասցեում գտնվող 167,28 ք.մ. բնակելի տուն, 2,2 ք.մ. /3,3 խ.մ./ պարիսպ եւ 0,08 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝14520000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 05.01.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝30.01.2023թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքերը:

Գ.

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

# ՄՐՑՈՒՅԹ Է ՀԱՅՏԱՐԱՐՎՈՒՄ

**Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Չարենցավանի № 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի անգլերեն /շաբաթական 12 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղի համար:**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար մասնակիցը տնօրենի կողմից նշանակված աշխատակցին է տրամադրում՝

1. դիմում (ձեւ 1) , մեկ լուսանկար՝ 3/4 չափի,
2.բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3. անձը հաստատող փոստաթուղթ,
4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից ,
5.ինքնակենսագրություն (ձեւ 5)
6. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ,
8.հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2022թ. դեկտեմբերի 19-ից մինչեւ 30-ը ներառյալ՝ ամեն օր՝ ժամը 10 00-ից 15 00-ն, բացի կիրակի եւ տոնական օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2023թ. հունվարի 9-ին՝ժամը 14:30-ին, ՀՀ Կոտայքի մարզի «Չարենցավանի № 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում՝ քաղաք Չարենցավան, Ռուսովի 7 հասցեում:

Տեղեկությունների համար զանգահարել (0226) 4-54 -98 հեռախոսահամարով:

Գ.

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՃԱՆԱՉՈՒՄ

# ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՍՏՂԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

**Արդեն ինն օր է՝ ադրբեջանական կողմը, խախտելով 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ համաձայնագրի դրույթները, բնապահպանական պատճառաբանություններով փակել է Արցախն աշխարհին կապող կյանքի միակ ճանապարհը՝ ոտնահարելով քաղաքացիական բնակչության կենսական շահերն ու իրավունքները:**







Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի փակման պաճառով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների եւ բեռների երթեւեկության արգելափակումը առաջացնում է Արցախի բնակիչների մի շարք հիմնարար իրավունքների խախտումներ, բացի այդ, Ադրբեջանը խափանել է նաեւ Արցախի գազամատակարարումը:

Արցախում կատարվող իրադարձություններին հետեւում են նաեւ աշխարհում մեծ ճանաչում ունեցող հայ հայտնիները, որոնք համացանցային տիրույթում բարձրաձայնում են Արցախում տիրող իրավիճակը եւ դիմում միջազգային կառույցներին:

ArmLur.am-ը ստորեւ ներկայացնում է նրանցից մի քանիսին:

Ամերիկյան Fox 11 հեռուստաալիքի հաղորդավարուհի, «Էմմի» մրցանակակիր Արաքսյա Կարապետյան. «Աշխարհում այնքան բան է կատարվում…. Երբեմն այդ ամենը կարող է ճնշող եւ հուսահատեցնող լինել:

Հայաստանում հենց այս պահին հումանիտար ճգնաժամ է սրվում: Արդեն երեք օր է, ինչ Հայաստանն Արցախին կապող ճանապարհը փակ է, ինչը խոչընդոտում է ազատ տեղաշարժին եւ մատակարարմանը: Բացի այդ, դադարեցվել է գազամատակարարումը 120 հազար մարդկանց համար ցածր ջերմաստիճանի պայմաններում»:

Կինոռեժիսոր Ջիվան Ավետիսյան. «Որքան երկար եք լռում, այնքան երկար է տեւում աղետը: Որքան երկար եք լռում, այնքան ավելի պատասխանատու եք դառնում այս հարցում: Սա վերաբերում է ցանկացածին, ում թվում է, թե այս հարցն իր խնդիրը չէ… Բարձրացրե՛ք ձեր ձայնը»:

Ռուս հայտնի շոումեն, հումորիստ Գարիկ Մարտիրոսյան. «Բոլորը քաջ գիտակցում են, որ մի քանի օր է, ինչ ամբողջությամբ փակված է Հայաստանը Արցախի հետ կապող միակ կյանքի ճանապարհը: 120 հազար հայ, այդ թվում՝ 30 հազար երեխա, մնացել են առանց առաջին անհրաժեշտության դեղամիջոցների, առանց բենզինի եւ դիզվառելիքի, գազամատակարարումն ամբողջությամբ անջատված է: Որպես բժիշկ եւ որպես մարդ՝ խնդրանքով դիմում եմ բոլոր անհատներին, բոլոր կազմակերպություններին, որոնք կարող են օգնել՝ ապաշրջափակելու կյանքի ճանապարհը. խնդրում եմ քայլեր ձեռնարկել, կանխել հումանիտար աղետը, որը, ցավոք, արդեն սկսված է»:

*ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ*

ՇՈՈՒԲԻԶՆԵՍ

# ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆՆ ԱՋԱԿՑՈՂ ՑՈՒՅՑԵՐ

**Արդեն իններորդ օրն է, ինչ ադրբեջանական կողմը, խախտելով 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ համաձայնագրի դրույթները, բնապահպանական պատճառաբանություններով փակել է Արցախն աշխարհին կապող կյանքի միակ ճանապարհը՝ ոտնահարելով քաղաքացիական բնակչության կենսական շահերն ու իրավունքները:**




Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի փակման պատճառով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների եւ բեռների երթեւեկության արգելափակումը առաջացնում է Արցախի բնակիչների մի շարք հիմնարար իրավունքների խախտումներ:

Արցախում կատարվող իրադարձություններից անմասն չեն մնում եւ իրենց ձայնն են բարձրաձայնում ոչ միայն սոցիալական հարթակներում, այլ նաեւ անձամբ ներկա են գտնվում բողոքի ակցիաներին:

ArmLur.am-ը ստորեւ ներկայացնում է նրանցից մի քանիսին:

Ծնունդով արցախցի դերասանուհի Տոմա Պետրոսյանը ներկա է գտնվել ՄԱԿ-ի գրասենյակի դիմաց տեղի ունեցած բողոքի ակցիաներին եւ իր անվերապահ աջակցությունն է հայտնել հայրենակիցներին եւ Արցախին:

Դերասանուհի Աստղիկ Ալավերդյանը նույնպես ներկա է գտնվել արցախահայության աջակցող բողոքի ակցիային եւ սոցիալական հարթակում կոչ արել իր հետեւորդներին դատապարտել Ադրբեջանի ցեղասպան քայլերը:

*Լ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ*

ԼՈՒՐԵՐ

## «ԱԿԲԱ» ԲԱՆԿԻ ՆՈՐ ՀԱՎԵԼՎԱԾԸ

«Ակբա» բանկի կողմից տեղաբաշխվող պարտատոմսերն այսուհետ հնարավոր է ձեռք բերել նաեւ acba digital-ի միջոցով:

Acba digital-ի «Ներդրումներ» բաժնում ընտրելով «Արժեթղթերի շուկա» ենթաբաժնի «Առաջնային շուկա» կոճակը՝ ներդրում կատարողը կտեղեկանա բանկի կողմից առաջնային շուկայում տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի հիմնական պայմանների մասին:

Գործընթացն իրականացվում է 24/7 սկզբունքով, ինչը նշանակում է, որ պարտատոմսի գնումը հնարավոր կլինի իրականացնել նաեւ ոչ աշխատանքային օրերին եւ ժամերին:

Ավելին կարող եք իմանալ՝ այցելելով բանկի պաշտոնական կայքէջ:

Acba digital հավելվածը հնարավոր է ներբեռնել բանկի պաշտոնական կայքէջից:

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բանկի թողարկած անվանական պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ եւ երաշխավորված են «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

## ՀՖՖ-Ն ԴԱՏԻ Է ՏԱԼՈՒ

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան դատի է տալու Երեւանի «Փյունիկ» ֆուտբոլային ակումբի սեփականատեր Արթուր Սողոմոնյանին:

ՀՖՖ տարածած հաղորդագրության մեջ մասնավորապես ասված է. ««Փյունիկ» ֆուտբոլային ակումբի սեփականատեր Արթուր Սողոմոնյանն այս տարվա դեկտեմբերի 16-ին ակումբի պաշտոնական կայքին տված հարցազրույցում Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի եւ ՀՖՖ ղեկավարության հասցեին հնչեցրել է կեղծիք, զրպարտություն պարունակող հայտարարություններ, նաեւ դիմել է սուտ մատնության, ինչը, ՀՀ քրեական օրենսգրքի համաձայն, ենթակա է քրեական պատասխանատվության: Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան պաշտոնապես հայտարարում է, որ ՀՖՖ-ի եւ ՀՖՖ ղեկավարության հասցեին արված զրպարտության եւ կեղծիքի համար դատարանի միջոցով «Փյունիկ» ֆուտբոլային ակումբի սեփականատեր Արթուր Սողոմոնյանին պարտադրելու է հրապարակային ներողություն խնդրել, ինչպես նաեւ միջոցներ է ձեռնարկելու վերջինիս սուտ մատնության համար քրեական պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ»:

Արթուր Սողոմոնյանը նաեւ քննադատել էր Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի ղեկավարությանը եւ պահանջել էր ֆեդերացիայի նախագահ Արմեն Մելիքբեկյանի հրաժարականը:

● *Դեկտեմբերի 22-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի կունենա «Հոգու զրույց» փառատոնը: Տոմսերի արժեքը՝3000-7000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

# ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

*Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ*

## ԿԱՐԳ

**ՀԱՐՑ. Ո՞րն են պետության եւ համայնքների սեփականությանը պատկանող հողերի անհատույց (մշտական) օգտագործման տրամադրման կարգերը:**

*Արտաշես Իգիթյան (35 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Պետության եւ համայնքների սեփականությանը պատկանող հողերն առանց մրցույթի, անհատույց (մշտական) օգտագործման են տրամադրվում՝

- պետական կամ համայնքային հիմնարկներին ու կազմակերպություններին,
- բարեգործական, հասարակական կազմակերպություններին եւ հիմնադրամներին՝ իրենց գործունեության ընթացքում ձեռնարկատիրության հետ չկապված գործունեություն իրականացնելու համար,
- Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին),
- «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ՊՄԳ ծրագրի շրջանակներում՝ մասնավոր գործընկերոջը:

*ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Օրենքով եւ այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում համայնքների վարչական սահմաններում գտնվող պետության եւ համայնքների սեփականությանը պատկանող հողերը մշտական օգտագործման է տրամադրում համայնքի ղեկավարը՝ լիազորված պետական մարմնի գրավոր հայտի հիման վրա՝ հայտն ստանալու պահից՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում:

## ԻՐԱՎՈՒՆՔ

**ՀԱՐՑ. Ե՞րբ կարող է վերականգնվել ծնողական իրավունքները:**

*Իրինա Սաղաթելյան (28 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Ծնողական իրավունքները կարող են վերականգնվել, եթե ծնողները կամ նրանցից մեկը փոխել են իրենց վարքագիծը, կենսաձեւը եւ (կամ) երեխայի դաստիարակության նկատմամբ վերաբերմունքը:

- Ծնողական իրավունքները վերականգնվում են դատական կարգով՝ ծնողական իրավունքներից զրկված ծնողի դիմումի հիման վրա: Ծնողական իրավունքների վերականգնման մասին գործերը քննվում են խնամակալության եւ հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությամբ:
- Ծնողական իրավունքների վերականգնման մասին դիմումի հետ միաժամանակ կարող է քննության առնվել նաեւ երեխային ծնողներին կամ նրանցից մեկին վերադարձնելու մասին պահանջը:
- Երեխայի նկատմամբ ծնողական իրավունքների վերականգնումը կատարվում է՝ հաշվի առնելով նրա կարծիքը: Դատարանը, հաշվի առնելով երեխայի կարծիքը, իրավունք ունի մերժելու ծնողական իրավունքների վերականգնման հայցը, եթե ծնողական իրավունքների վերականգնումը հակասում է երեխայի շահերին:

*ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Ծնողական իրավունքների վերականգնում չի թույլատրվում, եթե երեխան որդեգրված է, եւ որդեգրումը սահմանված կարգով չի վերացվել:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ Արցախից*



Արդեն իններորդ օրն է՝ Ադրբեջանը շարունակում է փակ պահել Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհը: 1100 քաղաքացի, որից 270-ը՝ անչափահաս, տուն վերադառնալու հնարավորություն չունի: Այս օրերին Արցախն ապրում է շրջափակված լինելու պայմաններում, բայց դա չի խանգարում շարունակել ապրել եւ արարել:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայմամուլ» ՓԲԸ**
հեռ. 45-82-00, 45-19-11

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:




Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

### ԱՌԱՋԱՐԿ
### հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ ____________________
Ազգանուն՝ ____________________
Առաքման հասցե՝ ____________________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________________

*Հեռ.՝ (060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*




*«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **19.12.2022**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: